ԵՊՀ ԻՄ շրջանավարտների մասնագիտական հմտությունների վերաբերյալ արտաքին շահակիցների կարծիքի ուսումնասիրության 2020-2021թթ. հարցման արդյունքների և 2016-2020թթ. հարցման արդյունքների համեմատական

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

(2020-2021 ուստարի)

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի կարևոր խնդիրներից է աշխատաշուկայի պահանջներին բավարարող, բարձր որակավորում ունեցող շրջանավարտներ տալը: Կրթական իր գործունեության ընթացքում Մասնաճյուղը մշտապես կարևորել է իր արտաքին շահակիցների կարծիքները և առաջարկները՝ դրանք հավաքագրելով ամենամյա իրականացվող հարցուների միջոցով: 2011թ.-ից իրականացվող այդ հարցումները թույլ են տալիս ժամանակին ու պատշաճ արձագանքել գործատուների պահանջներին: Նշենք, որ վերջին 4 տարիներին հարցումն իրականացվում է առցանց, անանուն, հարցմանը մասնակցում են մարզի գործատու կազմակերպությունների՝ հիմնականում բանկերի, դպրոցների, հյուրատների, հասարակական կազմակերպյուոնների, տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարները: 2021 թ.-ին իրականացված հերթական ուսումնասիրության համար էլեկտրոնային հարցաթերթ ուղարկվել է 157 գործատուների, արձագանքել են ընդամենը 70-ը (45%-ը):

Ուսումնասիրության նպատակն էր պարզել արտաքին շահակիցների կարծիքը մասնաճյուղի շրջանավարտների մասնագիտական և անձնային որակների վերաբերյալ: 5-բալային սանդղակով գործատուները գնահատել են մասնաճյուղի շրջանավարտների տեսական գիտելիքներն ու գործնական հմտությունները, կազմակերպչական, ստեղծագործական ու հաղորդակցական կարողությունները, անձնային-բարոյական որակները, ինքնակատարելագործման դրսևորումը, թիմային աշխատանք կատարելու ունակությունները և այլն:

Հարցման արդյունքները վերջնական ամփոփվել են 2021թ.-ի դեկտեմբերին: Մասնաճյուղի արտաքին կապերի բաժնում իրականացվել է հավաքագրված տվյալների մշակում, արդյունքների վերլուծություն, կատարվել է նաև նախորդ տարիների նույն հարցման արդյունքների հետ համեմատական վերլուծություն:

Հետազոտության արդյունքներն ընդհանուր առմամբ գոհացնող են, ինչը փաստում է, որ մասնաճյուղը կատարել է և շարունակում է զարգացնել իր առջև դրված գլխավոր ռազմավարական խնդիրներից մեկը, այն է աշխատաշուկային տալ մրցունակ մասնագետներ: Կարևոր է նշել նաև այն փաստը, որը հարցման մասնակիցների քանակը վերջին տարիներին ավելացել է, ինչը վկայում է, որ նրանք շահագրգռված են Մասնաճյուղի կրթական գործունեությամբ:

Ներկայացնենք տարբեր տարիներին հարցմանը մասնակցած կազմակերպությունների թիվը.

Հարցմանը մասնակցած կազմակերպությունների թիվը	2016թ.	2017թ.	2019թ.	2020թ.	2021թ.
	44	44	50	69	70

Հարցման մասնակիցները մասնավորապես գնահատել են մեր շրջանավարտների մասնագիտական պատրաստվածությունը, տեսական գիտելիքների իմացությունը, գործնական հմտությունները և մասնագիտական խոսքը: Հարկ է նշել, որ վերջին 3 տարիների համեմատ շահակիցների տված գնահատականների միջինը փոքր-ինչ նվազել է և ցածր է 4 միավորից:

Թիվ	Շրջանավարտների	Միջ. գնահ.				
		2016թ.	2017թ.	2019թ.	2020թ.	2021թ.
1	Մասնագիտական պատրաստվածությունը	3.9	4.05	4.00	4.01	**3.97**
2	Տեսական գիտելիքների իմացությունը	3.8	4.07	4.03	4.10	**4.00**
3	Գործնական հմտությունները	3.7	3.86	3.08	3.87	**3.71**
10	Մասնագիտական խոսքը	3.6	4.11	4.00	4.04	**3.79**

Այս արդյունքները Մասնաճյուղի առջև հարցադրումներ են դնում, որովհետև դրանք խոսում են մեր շրջանավարտների մասնագիտական որակներից գործատուների բավարարվածության ցածր մակարդակի մասին: Օրինակ, մեր շրջանավարտների տեսական գիտելիքների իմացությանը **4 և 5 գնահատականներ** են տվել հարցմանը մասնակցած 70 շահակիցներից **57-ը** (82.6%-ը), որնը մյուս որակների համեմատ ամենաբարձր ցուցանիշն է, մասնագիտական պատրաստվածությանը՝ **53-ը** (76.8%-ը), իսկ

ահա մեր շրջանավարտների գործնական հմտությունները և մասնագիտական խոսքը չեն գոհացնում գործատուների գրեթե կեսին, համապատասխանաբար 27-ին և 26-ին։

Թիվ	Շրջանավարտների	Գնահատական				4 և 5	
		5	4	3	2	քան.	%
1	Մասնագիտական պատրաստվածությունը	15	38	15	1	53	76.8%
2	Տեսական գիտելիքների իմացությունը	15	42	13	1	57	81.4%
3	Գործնական հմտությունները	11	31	23	4	42	60.9%
10	Մասնագիտական խոսքը	14	30	23	3	44	62.9%

Չենք ցանկանում այս արդյունքները կապել Հայաստանի վերջին տարիների սոցիալ-տնտեսական իրավիճակի հետ, որովհետև գործատուները գնահատել են ո՛չ միայն վերջին տարիների շրջանավարտներին, այլ ընդհանրապես, իրենց կազմակերպություններում աշխատող բոլոր տարիների շրջանավարտներին։

Առաջարկում ենք ամբիոններում քննարկել այս արդյունքները, մշակել մոտեցումներ առանձնապես ուսանողների գործնական կարողությունների և մասնագիտական խոսքի զարգացման ուղղությամբ։

Հարցման շրջանակներում փորձել ենք պարզել, թե մեր շրջանավարտների մոտ որքան է բարձր ինքնադրսևորվելու կարողությունները, մասնավորապես որքան է նրանց մոտ զարգացած հաղորդակցվելու, արագ և ճիշտ կողմնորոշվելու, խնդրահարույց հարցեր առաջադրելու և դրանց լուծման արդյունավետ ուղիներ փնտրելու, մասնագիտական գործընթացում ստեղծագործական մոտեցումներ ցուցաբերելու կարողությունները և այլն։

Թիվ	Շրջանավարտների.	Միջ. գնահ				
		2016թ.	2017թ.	2019թ.	2020թ.	2021թ.
4	Հաղորդակցվելու կարողությունները	3.57	4.18	4.2	4.2	**4.2**
6	Ստեղծագործական մոտեցումները մասնագի-տական գործընթացում	3.86	4.16	4.20	3.88	**3.81**
7	Քննադատական – վերլուծական կարողությունները	3.52	3.90	3.90	3.75	**3.61**
8	Տարբեր իրավիճակներում արագ և ճիշտ կողմնորոշվելու կարողությունները	3.52	4.05	3.90	3.90	**3.76**
9	Խնդրահարույց հարցեր առաջադրելու և դրանց լուծման արդյունավետ ուղիներ փնտրելու կարողությունները	3.41	4.00	3.90	3.70	**3.57**

Ներկայացված տվյալները վկայում են, որ նշված որակների համար նույնպես 2021թ.-ի հարցման արդյունքները նախորդ տարիների համեմատ նվազել են և տեսանելի ցածր են 4 միավորից։ Այստեղ միջին ցածր գնահատականը ձևավորվել է հարցման մասնակիցների նշված որակներին տված 3 և 2 գնահատականների գերակշռությամբ։ Մասնավորապես, 70 գործատուներից 24-ը (34.3%-ը) մեր շրջանավարտների մասնագիտական գործընթացում ցուցաբերած ստեղծագործական մոտեցումները գնահատել են 2 և 3 գնահատականներով, 33-ը (գրեթե կեսը)՝ քննադատական-վերլուծական կարողությունները, 27-ը (38.6%-ը) գտնում են, որ մեր շրջանավարտները չեն կարողանում արագ և ճիշտ կողմնորոշվել տարբեր գործնական իրավիճակներում, իսկ ամենացածր դրսևորում ունեն մեր շրջանավարտների խնդիրներ դնելու և լուծելու կարողությունները (34 գործատու բավարարված չէ)։

Այս գնահատականներն ահազանգում են, որ Մասնաճյուղում հիմնական ուշադրություն դարձվում է գիտելիք և իմացություն տալու վրա, և ուսումնառության կազմակերպման ձևերն ու մեթոդները չեն նպաստում ուսանողների մոտ ստեղծագործական, քննադատական, վերլուծական կարողությունների զարգացմանը։

Այստեղ հավելենք, որ մեր 2022թ.-ի և հաջորդ տարիների շրջանավարտների մոտ ակնկալում ենք, որ գործնական միջավայրում տեսանելի կարտահայտվեն նրանց ձեռք բերած վերլուծական և հետազոտական կարողությունները, ինչը պայմանավորված կլինի կրթական գործընթացում ներդրված նոր մոտեցմամբ՝ հետազոտական աշխատանքների իրականացմամբ։

Մասնաճյուղի բոլոր կրթական ծրագրերում որպես վերջնարդյունք նշված են այն ընդհանրական կարողությունները, որոնք պետք է շրջանավարտին հնարավորություն տան թիմային աշխատելու, գործընթաց ղեկավարելու և իր ու իր գործընկերների համար պատասխանտվություն կրելու։ Հարցման միջոցով փորձել ենք պարզել, թե մեր շրջանավարտները որքանով ունեն այդ կարողությունները և ինչպիսինն է դրանց զարգացման դինամիկան։

Ներկայացնենք հարցման մասնակիցների տված գնահատականները մեր շրջանավարտների դրսևորած ընդհանրական կարողությունների վերաբերյալ և նշենք, որ

այս անձնային և մարդկային որակներին տրված միջին գնահատականները նախորդ ցուցանիշների համեմատ էապես բարձր են և գերազանցում են 4-ին: Ըստ արդյունքների նկատելի խնդիր ունենք մեր շրջանավարտների թիմային աշխատելու ունակությունների (միջին գնահատականը՝ 4.01) և գործընկերներին աջակցելու և օգտակար լինելու կարողությունների (միջին գնահատականը՝ 4.07) դրսևորման հետ.

Թիվ	Շրջանավարտների.	2016	2017	2019	2020	2021
5	կազմակերպչական կարողությունները	3.91	4,20	4.10	4.13	**4.13**
12	աշխատանքային պատասխանատվությունը	4.11	4,34	4.20	4.43	**4.20**
13	թիմային աշխատանք կատարելու ունակությունները	4.11	4,27	4.10	4.11	**4.01**
14	գործընկերներին գնահատելու և նրանց օգտակար լինելու կարողությունները	3.91	4,34	4.20	4.29	**4.07**
11	վարվեցողության կանոններին և էթիկայի նորմերին հետևելը	3.93	4,20	4.30	4.41	**4.21**

Այս արդյունքները վկայում են, որ մեր գործատուներն ընդհանուր առմամբ բավարարված են մեր շրջանավարտների մարդկային և անձնային նշված որակներից և դա արտահայտել են հիմնականում 4 և 5 գնահատականներով: Այստեղ ուրախությամբ պետք է նշել, որ գործատուները բավարարված են գործնական միջավայրում մեր շրջանավարտների վարվեցողության և էթիկայի նորմերին հետևելու ունակություններից:

Իսկ ընդհանրապես պետք է փաստել, որ հարցման մասնակիցների 25%-ը, այնուամենայնիվ, բավարարված չէ նշված որակներից:

Հետևաբար, Մասնաճյուղը խնդիր ունի ուսանողների ընդհանրական կարողությունների ձևավորման հարցում: Այս խնդիրը կապված է դասավանդողների մոտեցումներից, դասախոսները պետք է անցնեն ուսանողակենտրոն ուսուցման, ուսումնառությունը կազմակերպեն խնդիրների, նախագծերի և թիմային աշխատանքների վրա, ուսանողներին դարձնեն ուսումնական գործընթացի հիմնական դերակատար՝ իր տեսակետներով և լուծումներով, նրա մոտ զարգացնեն առաջնորդելու, ղեկավարելու և պատասխանատվություն կրելու ունակություններ:

Ակնհայտ է, որ նշված կարողությունները ուսանողի մոտ կզարգանան, եթե նրա մոտ կա ինքնազարգացման ձգտում, և այն դրսևորվում է նաև մասնագիտական գործունեության ընթացքում: Նշենք, որ այս հարցում նույնպես հարցման մասնակիցները գրեթե նույն կարծիքին են և միջին գնահատականը կազմել է 3.94 միավոր, որն իհարկե գոհացնող չէ, և վկայում է, որ մեր շրջանավարտներն ուղղակի բավարարվում են ձեռք բերածով, չկա առաջընթացի ձգտում, ոգևորություն, հստակ նպատակ և այլն: Հարցման մասնակիցներից 24-ը (34%-ը) մեր շրջանավարտների ինքնազարգացման ձգտումը գնահատել են 2 և 3 գնահատականներով:



Նշենք, որ այս ցուցանիշը վերջին 5 տարիների ուսունասիրությունների արդյունքներով մշտապես եղել է ցածր, և ինչպես տեսնում ենք, բարելավման միտում չկա:

Ցավալի է, սակայն նույն ցածր գնահատականն է տրվել նաև մեր շրջանավարտների ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներով աշխատելու հմտություններին՝ 3.94 միջին գնահատական: Թվում է, թե տեղեկատվական այս դարում, ուսանողների մոտ, առավել ևս շրջանավարտների մոտ նման խնդիր չպետք է լիներ: Բոլոր կրթական ծրագրերով նրանք գործնականում, Մասնաճյուղի ժամանակակից համակարգիչներով սրահներում ծանոթանում և կիրառում են տեղեկատվական շատ ծրագրեր, ձեռք են բերում համացանցում աշխատելու, մասնագիտական հարթակներից օգտվելու, անհրաժեշտ տեղեկատվությունը ձեռք բերելու հմտություններ: Արդյունքում պարզվում է, որ կամ նրանք, այնուամենայնիվ, չեն կարողանում գործնականում կիրառել ձեռք բերած գիտելիքը, կամ այն բավարար չէ կոնկրետ կազմակերպությունների պահանջների տեսանկյունից:



Սա նշանակում է, որ Մասնաճյուղի Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոնը պետք է ուսումնասիրի մարզի գործատուների պահանջները և վերանայի համապատասխան դասընթացի ծրագիրը, նաև ամբողջ ուսումնառության ընթացքում, բոլոր դասավանդողները պետք է յուրովի նպաստեն ուսանողների մոտ այդ հմտությունների զարգացմանը՝ հաշվի առնելով իրենց մասնագիտական ոլորտի պահանջները:

Այս հարցման շրջանակներում ուսումնասիրել ենք նաև մարզի գործատուների կարծիքները Մասնաճյուղի հեղինակության վերաբերյալ իրենց կազմակերպությունում և ընդհանրապես տարածաշրջանում: Այդ հեղինակությունը ստեղծում է ոչ միայն Մասնաճյուղն իր գործունեությամբ: Այն ձևավորվում է իր շրջանավարտների գործունեությամբ, նրանց մասնագիտական, գործնական և անձնային որակներով: Կցանկանային, որ այն լիներ բարձր, ու դրան նպաստեին մեր բանիմաց և խելացի շրջանավարտները:

Հարցմանը մասնակից 70 գործատուներից 59-ը (84%-ը) իրենց կազմակերպությունում մասնաճյուղի հեղինակությունը գնահատել են 4 և 5 գնահատականներով՝ միջին միավորը 4.17, իսկ տարածաշրջանում՝ 56-ը:



Իհարկե սա վատ ցուցանիշ չէ, սակայն խոսում է շրջանավարտներ պատրաստելու գործում Մասնաճյուղում առկա խնդիրների մասին:

Նշենք, որ այդ ցուցանիշը վերջին 4 տարիների համեմատ նվազել է: Հետևաբար, Մասնաճյուղը պետք է համապատասխան քայլեր ձեռնարկի կրթական ծրագրերի իրականացման որակի բարձրացման ուղղությամբ:

Այն հարցին, թե խորհուրդ կտան մեր շահակիցներն իրենց մերձավորներին և ընկերներին դիմել ԵՊՀ ԻՄ, դրական է պատասխանել հարցման մասնակիցներից 62-ը (88.6%-ը), և այս ցուցանիշը նույնպես նվազել է նախորդ տարիների համեմատ, ինչը մտահոգության տեղիք է տալիս:



Այս արդյունքներն ուղղորդում են նրան, որ Մասնաճյուղում պետք է բարձրացնել կրթության որակը, ուշադրություն դարձնելով աշխատաշուկայի պահանջներին՝ վերանայել կրթական ծրագրերը՝ շեշտը դնելով ուսանողների գործնական, ստեղծագործական և հետազոտական կարողությունների զարգացման վրա, ակտիվացնել մասնագիտական պրակտիկաները, դրանք դարձնել ավելի նպատակային և նեղ մասնագիտական և այլն:

Այս հարցման փոձել ենք պարզել, թե տարածաշրջանում ինչ մասնագետների կարիք կա և ինչ նոր մասնագիտություններով ուսումնառություն են առաջարկում իրականացնել Մասնաճյուղում: Նշենք, որ առաջարկվող մասնագիտությունների ցանկը նախորդ ուսումնասիրության արդյունքներից շատ չի տարբերվում, ինչը վկայում է, որ տարածաշրջանում, իսկապես, նշված մասնագետների կարիք կա: Այդ ցանկը ներկայացված է աղյուսակում: Մասնաճյուղը պարբերաբար քննարկում է այս առաջարկները և իր հնարավորությունների սահմաններում ներդնում է նոր կրթական ծրագրեր, ինչպես օրինակ վերջին տարիներին իրականացվող հետևյալ կրթական

ծրագրերը՝ ռուսաց լեզու և գրականություն, հոգեբանություն, դեկորատիվ-կիրառական արվեստ, 2020-2021 ուսումնական տարվանից մասնաճյուղում իրականացվում է «Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագրով մագիստրոսական կրթություն: Սա վկայում է այն մասին, որ Մասնաճյուղը արձագանքում է աշխատաշուկայի պահանջարկին:

ԹԻՎ	ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ՔԱՆԱԿ	
		2020	2021
1.	Միջազգային հարաբերություններ	1	1
2.	Թարգմանչություն մասնագիտություն	2	1
3.	Ագրո մասնագետներ / գյուղատնտես, սննդի տեխնոլոգ, անասնաբուժ/, գյուղատնտեսությանը վերաբերող մասնագիտություններ	4	3
4.	Լրագրություն, PR	2	2
5.	Մարդկային ռեսուրսների կառավարում	2	
6.	Մարքեթինգ, բիզնես ոլորտ	1	1
7.	Ծրագրավորում, SS ոլորտի ցանկացած մասնագիտություն, վեբ ծրագրավորում, բարձր տեխնոլոգիաների ուսուցում,	5	3
8.	Ռուսաց լեզվի ուսուցիչ, բացել նաև ռուսաց լեզվի մագիստրատուրա, ռուսաց լեզվի մասնագիտության հեռակա բաժին	5	6
9.	Գերմաներեն լեզվի ուսուցիչ	1	2
10.	Կենսաբանության ուսուցիչ	4	2
11.	Աշխարհագրության ուսուցիչ	3	2
12.	Քիմիայի ուսուցիչ	4	7
13.	Ֆիզիկայի ուսուցիչ, էլեկտրոտեխնիկայի մասնագետ		2
14.	Նախնական զինվորական պատրաստության ուսուցիչ	2	3
15.	Տեխնոլոգիայի ուսուցիչ, կերպարվեստի ուսուցիչ	2	3
16.	Ֆիզկուլտուրայի ուսուցիչ	3	2
17.	Բնագիտական առարկաների ուսուցում	3	2
18.	Իրավաբանություն, իրավագիտություն, իրավունքի տեսություն / բացել իրավաբանակն ֆակուլտետ	8	7
19.	Վերամասնագիտացում մանկավարժական մասնագիտություններով, նախադպրոցական կրթության	2	4
20.	Դեղագիտություն/ֆարմացիա/	1	1
21.	Մշակույթ, արվեստ, արհեստագործություն, ոսկերչություն	3	
22.	Մագիստրոսական կրթության ընդլայնում	2	

Նշվածներից երևում է, որ տարածաշրջանում շատ է բնագիտական առարկաների՝ քիմիայի, կենսաբանության, ֆիզիկայի ուսուցիչների պահանջը, շահակիցների կողմից մշտապես բարձրաձայնվում է նախնական զինվորական պատրաստության ուսուցիչներ պատրաստելու հարցը, նաև ՏՏ ոլորտի ժամանակակից մասնագիտությունների իրականացումը:

Այժմ անդրադառնանք հարցման շրջանակներում բաց հարցերի միջոցով Մասնաճյուղի շրջանավարտներին վերաբերյալ շահակիցների կարծիքների ուսումնասիրությանը: Մասնավորապես, նրանց առաջարկվել է նշել, թե աշխատանքի ընդունելիս հատկապես ինչն են կարևորում և որքանով մեր շրջանավարտները կարողանում են հաղթահարել մրցույթները, նշել են, թե մասնագիտական ինչ որակներ կցանկանային փոխել մեր շրջանավարտների մոտ և այլն:

«Որքանով են ԵՊՀ ԻՄ-ի շրջանավարտների մասնագիտական գիտելիքները մրցունակ աշխատաշուկայում» հարցին **13** շահակից գնահատել է բավարար, **6-ը**՝ դժվարանցել է պատասխանել, կամ ուղղակի չգիտի, **6-ը**՝ նշել է միջին չափով, **10-ը**՝ համարում են, որ մեր շրջանավարտները մրցունակ են, **2-ը** նշել է, որ մրցունակ են 80-ից 90 տոկոսով:

Այստեղ պետք է առանձնացնել մի հանգամանք, որի մասին նշել են նաև շահակիցները, որ տարածաշրջանում թափուր աշխատատեղերի մրցույթներին մասնակցողները, կարելի է ասել միայն ԵՊՀ ԻՄ-ի շրջանավարտներն են:

Նաև առանձնահատուկ նշենք, որ գրեթե բոլորը փաստում են մեր շրջանավարտների բարձր գիտելիքների մասին, նշելով պրակտիկ և գործնական կարողությունների պակասի մասին: Ցավով պետք է նշել, որ կան շահակիցներ, որոնք հստակ փաստում են շրջանավարտների ցածր մասնագիտական որակների մասին:

Նշենք մեր շրջանավարտների մրցունակության վերաբերյալ դրական և բացասական մի քանի հետաքրքիր կարծիքներ.

- Այնքանով, որքանով նրանք ստացել են հիմնարար գիտելիքներն և ունեն բնատուր ընդունակություններ ու տրամաբանված միտք մարզի տարածքում մրցունակ են,

- արժանի են հարգանքի,

- համարժեք է մնացած համալսարաններին,

- լավ և բանիմաց ուսանողները միշտ պահանջված են,

- Կան մասնագիտական թերացումներ, մեթոդների չեն տիրապետում, աշխատաշուկա մուտք գործելուց առաջ լրացուցիչ դասընթացների կամ պրակտիկայի կարիք ունեն։

«***Աշխատանքի ընդունելիս հատկապես ինչն եք կարևորում»*** հարցին շահակիցների մեծ մասը պատասխանել են, որ կարևորում են գիտելիքներն ու պրակտիկ հմտությունները, մասնագիտական որակավորումը, պատրաստվածությունը, կարողությունները և համապատասխանությունը տվյալ պաշտոնին, ՄՈԳ-ը, ճիշտ խոսելու, շփվելու ունակությունները, մարդկային որակը, դասարանը պահելու հմտությունը։ Պատասխանատվությունը, մասնաճյուղի հեղինակությունը, սովորելու և կատարելագործվելու ձգտումը, պարտաճանաչության զգացումը, իմացությունը, ձգտումը, ընդունակությունը, վարվեցողությունը, մանկավարժական կարողությունները, արագ կողմնորոշվելու և արագ նորը սովորելու կարողությունը, բացի այդ կարևորում են թիմում աշխատելու հմտությունները, պատասխանատվության զգացումը և զարգանալու ձգտումը, մասնագիտական գիտելիքները և մարդկային արժեքները, աշխատասիրությունը, պատասխանատու վերաբերմունքն աշխատանքի նկատմամբ, ինքնուրույն մտածելու և առաջադրված խնդիրների լուծումն ինքնուրույն գտնելու կարողությունը, գիտելիքների պաշարը, ինքնակրթվելու պատրաստակամությունը, որակավորման համապատասխանելիությունը, խոսքը, ներկայանալու հմտությունները, գործնական գիտելիքները և նորը սովորելու մոտիվացիան, շփման հմտությունները։

«***ԵՊՀ ԻՄ-ի շրջանավարտների մասնագիտական և մանկավարժական ինչ որակներ կցանկանայիք փոխել»*** հարցի համար ստացել ենք հետևյալ պատասխաններ.

- մասնագիտական և մանկավարժական որակները կարող են փոխվել միայն ջանադիր աշխատանքի ընթացքում,
- Ընդունել և ավարտեցնել որակյալ շրջանավարտների,
- Մեծացնել աշխատասիրությունը, առաջ գնալու ձգտումը,
- Ցանկալի է բարձրացնել SS իմացության մակարդակ,
- Զարգացնել բանավոր խոսքը,։

«ԵՊՀ ԻՄ-ի շրջանավարտների, որ առավելությունները կցանկանայիք ընդգծել» հարցին շահակիցները շահակիցների **90%-ը** նշել է պարտաճանաչությունը, պատասխանատվությունը, աշխատասիրությունը, մասնագիտական պատրաստվածությունը, մասնագիտական բարձր գիտելիքները, **10%-ը** ինքնակատարելագործվելու ձգտումը, թիմային աշխատանքում դրսևորելու կարողությունը, դաստիարակվածությունը, կազմակերպվածությունը:

Շահակիցների անկեղծ և ճիշտ պատասխաններն օգնում են մեզ ավելի շատ ուշադրություն դարձնել շրջանավարտների մասնագիտական որակների բարելավման հարցում:

<u>Ելնելով վերոնշյալ խնդիրներից առաջարկվում է.</u>

- Հարցման արդյունքների մասին իրազեկել մասնաճյուղի դասախոսական և ուսանողական կազմին, քննության առարկա դարձնելով կրթական ծրագրերի կատարելագործմանն ուղղված ներկա գործընթացներում արտաքին շահակիցների առաջարկները և կարծիք-գնահատականները:
- Ուսումնամեթոդական վարչության, համապատասխան մասնագիտությունների պատասխանատուների հետ քննարկել կրթական ծրագրերում այնպիսի թեմաների կամ լրացուցիչ դասընթացների ներմուծումը, որոնց դասավանդումը հնարավորինս կապահովի շրջանավարտների մասնագիտական ու անձնային որակների զարգացումը, որը ժամանակակից աշխարհում կբավարարի գործատուների պահանջներին:
- Ստեղծել հանձնաժողով, որի շնորհիվ հաճախ հանդիպում-քննարկումներ կկազմակերպվեն առաջ եկած խնդիրների համար լուծման եղանակներ առաջարկելու նպատակով:
- Կազմակերպել քննարկում ՌԾ-ով համագործակից ստորաբաժանումների հետ (ՈւՄՎ, ՄԿՈԱ, Կրթական ծրագրերի պատասխանատու, ՈԻԽ, ֆակուլտետներ): Ներկայացնել առաջարկներ, մշակել նոր մեթոդներ, որոնք հնարավորություն կտան առավել զարգացնել ուսումնական գործընթացը և առավել համապատասխանեցնել ժամանակի պահանջներին:

Արտաքին կապերի բաժին